

ՆԱԽԲԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ՀԱՄԻՂՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՊԻԵՌ-ՔԻՅԵԱՌԸ

XIX դարի 90-ական թվականներին Օսմանյան կայսրության տարածքում համիդյան վարչակարգի սանձազերծած հայ ժողովրդի կոտորածների արձագանքները, չնայած օսմանյան իշխանությունների կողմից կաշառված ֆրանսիական մամուլի լրակեցությամբ¹, հասել են, այդուհանդերձ, Ֆրանսիայի սահմանը: Անկողմնակալ դիրքերից համիդյան կոտորածների ընթացքն այստեղ քննարկել են քաղաքական զանազան կողմնորոշումներ ունեցող բազմաթիվ քաղաքական և կրոնական գործիչներ, գրողներ, պատմաբաններ ու լրագրողներ:

Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը լուսաբանելու, թուրք շարդարարներին խարազանելու, մեծ տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսևորած անկարեկից վերաբերմունքը մշակակելու ասպարեզում անգնատառելի ավանդ է ներդրել Հայ դատի անմնացորդ մվիրյալ, բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Պիեռ Քիյեառը (1864-1912), որի հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ ծագել է արյունալի իրադարձությունների առաջին իսկ պահից և ընդլայնվել դրանց զարգացմանը զուգընթաց:

1893-1896 թթ. Կ. Պոլսում բնակություն հաստատած Քիյեառը ֆրանսիացի այն եզակի ժամանակակիցներից էր, որն ինչպես Վիկտոր Բերարը և Լյուդովիկոս դը Կոնտենտոնը, եղել է համիդյան կոտորածների առաջին փուլի ակնմատեսը: Այստեղ մրան աշխատանքի էր հրավիրել Բերայի Հայ կաթոլիկ լուսավորչական ուսումնարանը՝ ֆրանսերեն և լատիներեն դասավանդելու համար: Կ. Պոլսում հաստատվելուց փոքր անց, նա փիլիսոփայություն և գրականության պատմություն դասավանդելու հրավեր է ստացել նաև Ղալաթիայի հայկական Կեդրոնական վարժարանի կողմից, որը բարյացակամորեն ընդունել է²: Մանկավարժական գործունեությունից զատ, Քիյեառը Կ. Պոլսում զբաղվել է նաև բանասիրական աշխատանքներով, թարգմանել հին հունական փիլիսոփայության վերջին՝ Աեռալատական դպրոցի ներկայացուցիչների՝ Պորփյուրի (232-304), Յամբլիքոսի (250-330) ստեղծագործությունները, ինչպես նաև 2-3-րդ դդ. հույն գրող Կլավդիոս Լիվանոսի «Հողագործական մամակները»³:

¹ Այդ մասին տե՛ս V. Bérard, La politique du sultan, Paris, 1897, p. 290; U. Gohier, Agir nous-même // «Դրոշակ», 1900, թիվ 6, էջ 81:

² E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Alfortville, 2001, p. 26.

³ Les lettres rustiques de Claudius Aelianus, Presentin. Traduites du grec en français par Pierre Quillard, Paris, 1895. Նշենք, որ հետագայում Քիյեառը թարգմանել է նաև Սոֆոկլեսի «Ֆիդիպեդոն» ողբերգությունը (1896), ինչպես նաև մ.թ.ա. 3-րդ դարի հույն գրող Հերոնդասի «Մճակատարությունները» (1900): Ի դեպ, նրա՝ իբրև բանաստեղծի և թարգմանչի բարձր գնահատականը տվել են ֆրանսիացի գրողներն ու գրականագետները (Ա.

Այսպես, ըստ Քիլեաթի ֆրանսիացի ժամանակակիցներից մեկի՝ Ա. Ֆերդինանդ Հեբոլդի դիպուկ բնորոշման, «Արևելք կատարած այցելությունը փոխել է նրա կյանքի ընթացքը»⁴։ Թեպետ XIX դարավերջին և XX դարասկզբին նրա քաղաքական գործունեությունը լայն ընդգրկում է ունեցել (ակտիվորեն մասնակցել է Մակեդոնիայում ծավալված իրադարձություններին, Դրեվֆուսի գործին, Զոլայի դատավարությանն առնչվող քննարկումներին, եղել է Մարդու իրավունքների լիգայի հիմնադիրներից, 1904 թ. ընտրվել է դրա կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1911 թ.⁵ զլխավոր քարտուղար)⁵, այդուհանդերձ, Հայկական հարցը մշտապես մնացել է նրա մտորումների և գբաղումների առանցքում։

Հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Քիլեաթի հետաքրքրությանն աճին մեծապես նպաստել են 1894 թ. սկիզբ առած նրա բարեկամական հարաբերություններն ու սերտ համագործակցությունն Արշակ Չոպանյանի հետ, որը ընդհատվել է միայն ֆրանսիացի մտավորականի վաղաժամ մահվամբ⁶։ Հայ դատին գորավիզ լինելու առաքելությունը Քիլեաթը ստանձնել է դեռևս Կ. Պոլսում բնակվելու ժամանակաշրջանում, որը վկայում է արևմտահայությանը կործանումից փրկելու նրա անսասան հաստատականության մասին։

Առաջին անգամ ֆրանսիական հանրության ուշադրությունը հայկական կոտորածների վրա նա հրավիրել է դեռևս 1895 թ., երբ Մորիս Լևեյր կեղծանունով⁷ հանդես է եկել 1894 թ. Սասունի դեպքերին նվիրված հոդվածով⁸։ Հեղինակը տեղի ունեցած «սարսափելի կոտորածների», «բարբարոսական զագրելի գործողությունների» մասին, ըստ իր հավաստման, առաջին լուրերը քաղել է անգլիական և ֆրանսիական որոշ լրագրներից։

Հենվելով մատչելի, թեև դեռևս սակավաթիվ, այդուհանդերձ, «անառարկելի արժանահավատություն» ունեցող սկզբնաղբյուրների վրա (խոսքը վերաբերում է, մասնավորապես, Սասունի կոտորածների հետաքննությունը վարած քննիչ հանձնաժողովի «Համատեղ հաղորդագրությանը»⁹ և կոտորածների երեք հայ ականատեսներից ստացված տե-

Ֆրանս, Ա. Ֆոնտենաս, Ա. Ֆերդինանդ Հեբոլդ)։ Տե՛ս նրանց ելույթները 1912 թ. փետրվարի 16-ին Փարիզում գումարված՝ նրա հիշատակին նվիրված միստում. A la mémoire de Pierre Quillard, Paris, 1912, p. 11-12, 58, 60-70, 144-145. Քիլեաթի գրական գործունեության մասին տե՛ս նաև A. Vahramian, De l'affaire Dreyfus au mouvement arménophile: Pierre Quillard et Pro Armenia, "Revue d'histoire de la Shoah". Le monde juif, N 177-178, janvier-août 2003. Ailleurs, hier, autrement: connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 336-338.

⁴ A la mémoire de Pierre Quillard, p. 143.

⁵ Այս ասպարեզներում Քիլեաթի ծավալած գործունեության շուրջ տե՛ս Ֆ. ղը Պրեսանսեի և այլ ժամանակակիցների՝ նրա հիշատակին նվիրված ելույթները։ Նույն տեղում, էջ 73-99, 149, 168։

⁶ Ա. Չոպանյանի արխիվում պահպանվել են Քիլեաթի՝ նրան ուղղված 18 նամակները՝ նրանց գործունեության պոլիպան ժամանակաշրջանից ի վեր, որոնք, սակայն, նվիրված են երկրորդական խնդիրների։ Տե՛ս Գրականության և արվեստ թանգարան, ֆ. Ա. Չոպանյանի, քաժին III, վավ. 9455-9473: 1908 թ. Քիլեաթի առաջաքանով է լույս ընծայվել Չոպանյանի թարգմանությամբ իրականացված հայ հեղինակների պոեմների ժողովածուն. A. Tchobanian, Poèmes. (Traduction française). Préface de Pierre Quillard, Paris, 1908.

⁷ Այդ մասին տե՛ս վերը նշված՝ Քիլեաթի հիշատակին նվիրված միստում Ա. Չոպանյանի ելույթը. A la mémoire de Pierre Quillard, p. 35.

⁸ M. Leveyre, Les massacres des Sasounkh // "Revue de Paris", livraison du 1^{er} septembre 1895.

⁹ Տե՛ս Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897, p. 111-135.

ղեկություններին), մա ձգտում է «անկողմնակալ և ստույգ շարադրանքի» միջոցով՝ շարդերի մասին տեղեկություններ հաղորդել¹⁰:

Հավանաբար, դեռևս հատակ պատկերացումներ իսկ չունենալով թե՛ Հայկական հարցի ծագումը պայմանավորած պատմական հանգամանքների և թե՛ դրա գոյության մասին, Բիյեառն, այնուամենայնիվ, հպանցիկ ձևով անդրադառնում է օսմանյան «բարբարոսական վարչության» կողմից «ճնշված ու սնանկացած» արևմտահայության կացությանը Օսմանյան կայսրությունում մինչ Բեռլինի վեհաժողովի գումարումը և իրավամբ մատնացում, որ հայերը դարեր շարունակ «ուծի դեմ ուժով գործելու» ցանկություն չեն դրսևորել: Վերջիններս, սակայն, մրա կարծիքով, քառորդ դարից ի վեր «գիտակցել են տարրական, այդ թվում, կողոպուտին և կոտորածին դիմակայելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»¹¹: Ինչ վերաբերում է Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակներին, ապա հեղինակը գտնում է, որ իրադարձությունների զարգացման ընթացքը «դաժանորեն հուսախաբել է» հայերին և ի դերն հանել բարենորոգումների ճանապարհով «լավագույն ճակատագրի» արժանանալու մրանց հույսերը:

Օսմանյան կայսրությունում անընդմեջ տեղի ունեցող խմորումների փաստը մա մեկնաբանում է տեղական իշխանությունների կողմից գործադրվող կեղեքումների սաստկացմամբ և արդարադատության կատարյալ բացակայությամբ¹²: Այդ հեռքի վրա է մա քննարկում մա արևմտահայության մկատմամբ կիրառված զանգվածային բռնությունների շարժառիթները: Ըստ մրա՝ 1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունի տարածաշրջանն արյունամերկ արած իրադարձությունների անմիջական պատճառն է դարձել այն անելանելի կացությունը, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքիչ հարկեր վճարելու անընդունակ հայերը, որոնք հարկադրված են եղել զինված ընդհարումների մեջ մտնելու իրենց անողորմաբար կողոպտող հարստահարիչների հետ¹³:

Սասունի տարբեր գյուղերում տեղի ունեցած կոտորածների գլխավոր կատարածուներ հեղինակը համարում է քուրդ ելուզակներին և համիդիե զորամիավորումներին՝ չանտեսելով, այդուհանդերձ, Մուշից ժամանած զորքերի չարագուշակ դերը ծավալված իրադարձությունների ընթացքում, քանզի մրանք հանդես են եկել ոչ միայն իբրև հայկական գյուղերի վրա կազմակերպված հարձակումների «անհողողող» դիտորդներ, այլև ակտիվ մասնակիցներ¹⁴:

Բիյեառնի ուշադրությունից չեն վրիպել մա շարդարարների ստոր գործելամիջոցները. «Բանի որ բնաջնջումը կատարյալ չի եղել՝ այն ավարտին հասցնելու դիտավորությամբ դիմել են խորամանկության», - մշում է մա¹⁵: Ըստ այդմ՝ զենքերը վայր դնելու պայմանով հայերին ներում են խոստացել, սակայն, Անդոկ լեռան ստորոտում անձնատուր եղած վաթսուն երիտասարդների կենդանի թաղել են: Այդուհանդերձ, «ամենաանողկալի վայրա-

¹⁰ M. Leveyre, մշվ. աշխ., էջ 74:

¹¹ Նույն տեղում, էջ 75:

¹² Նույն տեղում, էջ 76:

¹³ Նույն տեղում, էջ 79-80:

¹⁴ Նույն տեղում, էջ 83:

¹⁵ Նույն տեղում, էջ 84:

գոյությունները», ըստ մրա, «սատմասրտորեն իրականացվել» են Գեղիեզուզանում¹⁶: Ընդհանուր առմամբ, համաձայն հեղինակի հաշվարկների, Սասունի տարածաշրջանում «վայրագորեն կոտորվել» է շուրջ վեց հազար բնակիչ և «ավերվել հազար ութսունութու տնից բաղկացած քաաներկու գյուղ»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Քիյեառը շեշտը դնում է Սասունի տարածաշրջանում արձանագրված դեպքերի թվարկման վրա և անկողմնակալորեն ուրվագծում իրադարձությունների ընդհանուր պատկերը: Այս առումով, կասկածից վեր է, որ իր առջև ծառացած հիմնական խնդիրը մա կատարել է հավուր պատշաճի: Կանգ առնենք, սակայն, մրա սակավաթիվ մեկնաբանությունների վրա ևս:

Ընդունելով, որ Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածները «սարսափելիության առումով շատ ավելի ողբերգական» են, քան չալ վայրերում արձանագրված անցքերը, մա իրավամբ եզրակացնում է. «Ամենևին հավաստի չի լինի կարծել, որ չափ ու սահման չունեցող վայրագությունից զատ, դրանք եղել են անսպասելի: Դրանք ընդամենն այն անհամոզործելի բռնությունների կրկնությունն են, սակայն ավելի ծանր հանգամանքներում, որոնց զոհը հայերն անընդմեջ դարձել են գրեթե ամենուր և որոնք կարող են, ի դեպ, այսօր կամ վաղը հասել բարբարոսության միևնույն վերջնագիծը»¹⁸: Այս հարցում հարկ է մրա արժանին հատուցել:

Կոտորածների պատասխանատուներին դիմագերծելու հարցում, սակայն, Քիյեառի մեկնաբանություններն ամենևին էլ սպառնիչ չեն: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Աբդուլ Համիդին, օրինակ, մա զերծ է պահում մվագազույն իսկ պատասխանատվությունից և իր համոզմունքը հայտնում, որ սուլթանի ապաշնորհ խորհրդականներն ի վիճակի չեն լինի մուրեցնել «խելացիությանը» ու «բարյացակամությանը» օժտված միապետին, որին կհաջողվի վերահաստատել «հանդարտությունը» և ապահովել հայ ժողովրդի «բարգավաճումը»¹⁹:

Օսմանյան կայսրության մայրաքաղաքում բնակվող՝ իրադարձությունների ժամանակակցի մամա դիրքորոշումը խորհրդածությունների տեղիք է տալիս: Ամտարակույս, այն զուցեև պայմանավորված է եղել Քիյեառի՝ խնդրո առարկա գործընթացին ոչ լրիվ իրազեկությամբ, որի հետևանքով մա դեռևս անկարող է եղել ըմբռնելու ցեղասպանության բուն էությունը և այն դիտել իբրև պետական քաղաքականության մակարդակով կյանքի կոչված իրադարձություն: Նման մեկնաբանությունը, սակայն, մեր կարծիքով համոզիչ չէ:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 86: Սասունում զոհված հայերի թվաքանակի շուրջ ստույգ տվյալներ չկան. այն տառամվում է մինչ տաս հազարի սահմանում: Այդ մասին տե՛ս Հ. Մ. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), Նրևան, 1985, էջ 202-203:

¹⁸ M. Leveyre, մշվ. աշխ., էջ 86-87:

¹⁹ Նույն տեղում, էջ 91: Խնդրո առարկա հարցի կապակցությամբ «Մեծ եղեռնը և Ֆրանսիան (1915-1918 թթ.)» դոկտորական ատենախոսության մեջ Ե. Գասպարյանը մշում է, թե իբր Քիյեառն «իր հողվածն ավարտում էր սուլթան Համիդին ուղղված կոչով»՝ «վերջ տալ հայկական կոտորածներին և երկրում հաստատել հանգըստություն» (էջ 26): Իրականում, ոչ միայն Գասպարյանի կողմից հղված՝ Քիյեառի հողվածի համապատասխան էջում (91), այլև դրա բնագրում առհասարակ ամհմար է գտնել մամա եզրահանգում:

Մտորելով խնդրո առարկա հարցում Քիյեառի գրաված դիրքորոշման շուրջ, հարկ է չանտեսել մի շարք էական հանգամանքներ: Նախ՝ չի բացառվում, որ սկիզբ առած կոտորածները կանխարգելելու դիտավորությամբ մա գործադրել է օսմանյան իշխանություններին սթափեցնելու ճիգեր և, հավանաբար, փորձել սուլթանին սիրաշահելու միջոցով խոչընդոտել դրանց հետագա ծավալմանը: Բացի դրանից, պատահական չէ, անշուշտ, որ Կ. Պոլսում բնակվող օտարերկրացիներ կոտորածներին նվիրված իր առաջին հոդվածները լույս է ընծայել կեղծամուճով²⁰: Հակառակ դեպքում, մա կարող էր, ըստ Չոպանյանի վկայության, հարվածի ներքո դնել ոչ միայն իրեն, այլև այն հաստատությունները, ուր աշխատում էր²¹:

Հարկ է չանտեսել մաև այն իրողությունը, որ ֆրանսիացի մտավորականը Կ. Պոլսում գտնվել է թուրքական ոստիկանության աշակույթ հսկողության ներքո, հանգամանք, որն, անկասկած, իր կմիքն է դրոշմել մա չափավոր մեկնաբանությունների վրա: Նշենք, ի դեպ, որ օգտագործած կեղծամուճը չի փարատել, այդուհանդերձ, Քիյեառի՝ իբրև հոդվածագրի հանդեպ թուրքական ոստիկանության տածած կասկածները, ինչը և հանգեցրել է մա կարճատև ձերբակալմանը²²:

1896 թ. Փարիզ վերադառնալուց հետո, Քիյեառի հայանպաստ գործունեությունը թևակոխում է մոր փուլ: XIX դարավերջին և XX դարասկզբին մա գրում է կոտորածների զանազան փուլերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, պարբերաբար հանդես գալիս ֆրանսիական մամուլում, մասնակցում Հայ դատին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին, 1897-1902 թթ. անդամակցում Արշակ Չոպանյանի միախառնություններին Փարիզում հիմնադրված «Ֆրանս-հայկական կոմիտեին», որի կազմում ընդգրկված էին մաև Հայ դատի շատ այլ բոցաշունչ պաշտպաններ, ինչպիսիք էին Վ. Բերարը, Ա. Վանդալը, Է. Լավիսը, Դ. Կոշենը, հայր Ծարմետանը և ուրիշներ²³:

Կասկածից վեր է, որ Քիյեառի հայանպաստ գործունեության ամենավաղ դրվագներն անքակտելիորեն կապված են «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի (1900-1908, 1912-1914 թթ.) հրատարակության հետ: Ստանձնելով պարբերականի գլխավոր խմբագրի պարտականությունները, մա լրագրի գրեթե լուրաքանչյուր համարում հանդես է եկել ծավալուն հոդվածներով և ամենայն մանրամասնություններով լուսաբանել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, մեկնաբանել մեծ տերությունների

²⁰ Կ. Պոլսում բնակվելու ժամանակաշրջանում Քիյեառի գրած հաջորդ և մեզ համար դեռևս անմատչելի հոդվածը ևս, որը նվիրված է Ա. Չոպանյանի աշխատասիրությամբ հրատարակված «Հայաստանի կոտորածները» ժողովածուին (*Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896*), լույս է տեսել կեղծամուճով (*M. L. Rogre, Les massacres d'Arménie. Quelques documents et remarques en l'honneur de sultan Abdul-Hamid, de la civilisation européenne et de l'alliance franco-russe // "Mercure de France", septembre 1896*): Այդ մասին տե՛ս E. Khayadjian, *Ազվ. աշխ. էջ 61*; A. Vahramian, *Ազվ. աշխ., էջ 341*:

²¹ A la mémoire de Pierre Quillard, p. 35.

²² Քիյեառն ազատ է արձակվել ֆրանսիական դեսպանության միջամտությունից հետո միայն: Տե՛ս մույն տեղում, էջ 36:

²³ E. Khayadjian, *Ազվ. աշխ., էջ 75*:

քաղաքականության ելևէջները²⁴։ Գործունեության այս շրջանում նրա առաջաքաններով հրատարակվել են նաև Հայ դատին և դրան հարակից հարցերին նվիրված մի շարք գրքեր²⁵։

Փարիզում հաստատվելուն հաջորդած տարիներին հայկական կոտորածների ծավալումը և դրանց առնչվող ստույգ տեղեկատվության հոսքը, ինչպես նաև ծանոթությունն արդեն հրապարակի վրա գտնվող՝ Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանը վերաբերող վավերագրերն ամփոփող «Դեղին գրքին»²⁶, մեծապես նպաստել են, որ Քիչեառը ճիշտ ըմբռնի կատարվող իրադարձությունները։ Քիչեառի հայացքների ակնհայտ էվոլյուցիայի կնիքն են կրում նրա բազմապիսի ելույթները, որոնց բնորոշ են Հայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության մեկնաբանումը, այդ գործընթացի առանձնահատկությունների բացահայտումն ու մանրագնին քննությունը, Աբդուլ Համիդի և նրա հանցախմբի մերկացումը, եվրոպական պետությունների, և մասնավորապես Ֆրանսիայի, դոսևորած անկարեկից դիրքորոշման անողորմ քննադատությունը։

Քիչեառի ելույթների թիրախում հառնում է Աբդուլ Համիդի հայատնյաց կերպարը, որին նա հիմնավորապես մերկացնում է իբրև հայկական կոտորածների կազմակերպիչի, անվանում «մեծ մարդասպան», «կայսրական ավազակ», «կարմիր գազան», «մարդկային կերպարանք ունեցող հրեշավոր գազան»²⁷ և այլն։ «Սուլթանը, — գրում է նա, — կրում է անձնական պատասխանատվություն։ Աբդուլ Համիդը և ստորադաս հանցագործները, որոնք նրա հպատակները լինելով իշխում են նրա վրա, հայկական տառապանքների բուն հեղինակներն են... Այդ նրա ցանկությամբ են սպանում. նրա բանազնացները կոտորում-անցնում են մահաճգները, իսկ կոտորածների ազդանշանը տրվում է նրա փոքրիկ սպիտակ ձեռքով»²⁸։

Ինչպես տեսնում ենք, մի քանի տարի առաջ՝ հայկական կոտորածներին Աբդուլ Համիդի ունեցած մասնակցության հարցում, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով,

²⁴ Լրագրի հիմնադրման մանրամասների, այդ ասպարեզում Քիչեառի ներդրած լուծայի, ինչպես նաև նրա՝ իբրև գլխավոր խմբագրի գործունեության մասին տե՛ս A. Vahramian, *ՁԿ. աշխ.*, էջ 343-347։ Ի դեպ, Ա. Վահրամյանը Քիչեառին իրավամբ անվանում է «լրագրի ոգին»։ Նույն տեղում, էջ 345։

²⁵ L'assassinat du Père Salvatore par les soldats turcs. Témoignage d'Aghassi, un des quatre chefs de l'insurrection de Zeitoun. Avec préface de Pierre Quillard, Paris, 1897; G. Dorys, Abdul-Hamid intime. Préface de Pierre Quillard, Paris, 1903; Pour l'Arménie et la Macédoine. Préface de Victor Bérard. Introduction de Pierre Quillard, Paris, 1904; Aknouni, Les plaies du Caucase. Avec préface de Francis de Pressensé et introduction de Pierre Quillard, Genève, 1905.

²⁶ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897. Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897. «Դեղին գրքի» մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2004, թիվ 9, էջ 100-111։

²⁷ P. Quillard, Préface // G. Dorys, Abdul-Hamid intime, p. VII, X; նույնի՝ La Quinzaine // "Pro Armenia", 10 décembre 1900; նույնի՝ La Quinzaine // "Pro Armenia", 25 septembre 1901.

²⁸ P. Quillard, Pro Armenia // "Pro Armenia", 25 novembre 1900.

դեռևս թերահավատություն դրսևորող Քիյեառն այժմ արդեն հանդես է գալիս մրան անարգանքի սյունին զամողի դերում: Նրա համոզմամբ՝ «բարենորոգումների փոխարեն, սուլթան Աբդուլ Համիդը մախապատրաստել է և 1893-1896 թթ. իրականացրել սարսափազդու կոտորածներ, որոնք ամենամշակավոր տիրակալների զահակալության պատմության ընթացքում երբևէ չեն արձանագրվել»²⁹:

Քիյեառն ամբողջությամբ բացահայտում է Աբդուլ Համիդի՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ վարած քաղաքականության բուն էությունը, որի զոհը, ինչպես մա իրավամբ մշում է, հայերից զատ դարձել էին շատ այլ, այդ թվում մահմեդական, ժողովուրդներ (բուլղարացիներ, հույներ, արաբներ, եգիպտացիներ), հավաստում է, որ սուլթանն «իր արյունալի գործը պսակել է սառնասրտորեն մտահղացված և հետևողականորեն իրականացված երեք հարյուր հազար հայերի բնաջնջմամբ»³⁰:

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած՝ ընդհանրապես բարենորոգումների իրականացման նպատակ հետապնդող «խաղաղ ցույցի» ճնշմանը հետևում է «մեծ կոտորածների ժամանակաշրջանը», որի ընթացքում «երեք հարյուր հազար մարդիկ սպանվում են, կախվում, այրվում, մորթագերծ արվում, մասնատվում, քանատվում»³¹:

Այս ջարդերի պատասխանատվությունը Քիյեառն բարդում է օսմանյան միապետի շուրջ համախմբված հանցախմբի վրա, որի իշխանությունը բնորոշում է իբրև «կամայական և անհամոզիչ»: Ինչպես մա մշում է, «համընդհանուր անապահովության» մթնոլորտում խաբխափող Օսմանյան կայսրությունում գոյություն ունի «զաղտնի, կոլեկտիվ և պատասխանատվությունից զուրկ իշխանություն, որի չարագուշակ դերը պարբերաբար սպրդել է մեր միջամտության անհրաժեշտությունն առաջադրող իրադարձությունների ընթացքում»: Խոսքը վերաբերում է Պալեին, որն «ամայացրել է երկիրը և իր բռնություններով ու բռնատիրությամբ ամենուր ապստամբությունների պատճառ դարձել»³²: Ընդհանուր առմամբ, հայկական կոտորածները մա դիտում է իբրև «համատեղ ջանքերով և վաղուց ի վեր մախապատրաստված» ծրագրի հիման վրա իրականացվող եղելություն³³:

Զբաղարարվելով, սակայն, սուկ Աբդուլ Համիդի մտահղացմամբ իրականացված՝ հայկական զանգվածային կոտորածների փաստի արձանագրմամբ, Քիյեառն թափան-

²⁹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, *Cahiers de la quinzaine* (3^e série, 19^e année) Paris, 1902, p. 6. Ե. Գասպարյանի այն հավաստումը, ըստ որի, Քիյեառնի մախող գրքերը, գրքույկներն ու հոդվածները «հավաքվեցին հայ ժողովրդի շահերը պաշտպանող» սույն ժողովածուի մեջ (Ե. Գասպարյան, *Զվ. աշխ.*, էջ 27), չի համապատասխանում իրականությանը: Նշենք, ի դեպ, որ այս գրքի հանձնարարականը Քիյեառնը ստացել է «*Cahiers de la quinzaine*» մատենաշարի հրատարակիչ Ժառլ Պեգիից: Այդ մասին տե՛ս G. Leroy, L'Arménie dans l'œuvre et la pensée de Charles Péguy, «Revue d'histoire de la Shoah». Le monde juif, N 177-178, p. 359-361.

³⁰ P. Quillard, *La Quinzaine* // «Pro Armenia», 25 décembre 1900.

³¹ P. Quillard, *Diplomatie secrète du sultan* (novembre 1897 - octobre 1898) // «Revue de Paris», livraison du 15 juin 1899, p. 883.

³² P. Quillard & L. Margery, *La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux*, Paris, 1897, p. 27-28.

³³ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie* // «Revue des revues», livraison du 15 octobre 1901, p. 115.

ցում է հայերի հանդեպ վարած մրա երկդիմի քաղաքականության և ստոր գործելամիջոցների առեջքների մեջ: Քիչեառն այս հարցում դրսևորում է համակողմանի մոտեցում և համոզմունք հայտնում, որ «հավանաբար, վստահություն չտածելով կառավարման իր իսկ կիրառած միջոցների արդյունավետության հանդեպ», սուլթանը վճռել է փոխել տակտիկան և երկյուղներից ձերբազատվել «մերթ դիվանագիտության, մերթ ուժի միջոցով»³⁴:

Քիչեառը վեր է հանում հայկական հեղափոխական կոմիտեների գործունեությանը քաջատեղյակ Աբդուլ Համիդի նեմզ վարքագծի էությունը, որը փորձել է Փարիզում հաստատված հայ հեղափոխականների հետ հարաբերություններ հաստատել և Վիլհելմ II-ի՝ Արևելք ուղևորվելու մախօրյակին, հնարավոր, սակայն տհաճ միջադեպերից խուսափելու դիտավորությամբ, 1897 թ. հոկտեմբերին սկսել է բանակցել մրանց հետ: Քիչեառը համաձայնագրերն վերլուծում է հայերին ներում շնորհող և բազմապիսի խոստումներ շտալող՝ 1898 թ. ապրիլի 15-ին Աբդուլ Համիդի հրապարակած հրովարտակը և ընդգծում, որ սուլթանը «չի իրականացրել իր խոստումներից և ոչ մեկը»³⁵:

Այս պայմաններում, մա միանգամայն օրինաչափ է համարում հեղափոխական գործունեությունը շարունակելու ուղղությամբ հայկական կուսակցությունների ցանկությունը, քանզի Օսմանյան կայսրության արևելյան մահաճգնեղում տիրող իրավիճակը մրանց ամենևին չէր տրամադրում «պասսիվ դիրքորոշում» որդեգրելու:

Համիդյան կոտորածների պատմության վերլուծությանն անդրադարձած ժամանակակիցների մեծամասնությունը ուշադրությունը կենտրոնացրել է գլխավորապես 1894-1896 և 1904 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների վրա: Ի տարբերություն այլոց, Քիչեառը բազմիցս հավաստել է Հայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը, պարբերաբար անդրադարձել 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածներին ևս, որոնց մվիրված մրա ուսումնասիրություններն առանձնաձև են ոչ միայն պատմի արժանահավատությամբ, այլև սպառնիչ մեկնաբանություններով³⁶:

XIX-XX դդ. սահմանագծին «գաղտնի հետապնդումների» կարճատև ժամանակահատվածին հաջորդած՝ Մուշում և Սասունում վերսկսված բռնությունների փաստը մա «անկասկատեսելի» չի համարում: Մամրամասն մկարագրելով 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանի զանազան գյուղերում ծավալված իրադարձությունները (քրդերի և կանոնավոր զորքերի կողմից գյուղերի կողոպուտ, ավերում, հրկիզում, բնակչության կոտորած և այլն), Քիչեառը Մուշի և Բիթլիսի շրջակայքում տեղի ունեցած ջարդերի պատասխանատվությունն անվարանորեն բարդում է «սուլթանի կառավարության» վրա, որը երկու տարուց ի վեր որոշել էր «հաշիվները մաքրել սասունցիների հետ»³⁷:

Նշենք, ի դեպ, որ 1901 թ. Մուշի հարթավայրում տեղի ունեցած կոտորածները մա պայմանավորում է XIX դարակզբից ի վեր հայ բնակչության աճով³⁸: Ի վերջո, օսման-

³⁴ P. Quillard, *Diplomatie secrète du sultan*, p. 884.

³⁵ Նույն տեղում, էջ. 886:

³⁶ Տե՛ս օրինակ՝ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie; anyah՝ Pour l'Arménie. Mémoire et dossier*, p. 44-50.

³⁷ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie*, p. 120.

³⁸ P. Quillard, *Pour l'Arménie. Mémoire et dossier*, p. 63.

յան կառավարության գործադրած ջանքերի հետևանքով, ինչպես կսկիծով արձանագրում է Քիյեառը, Մուշի հարթավայրում 1901 թ. հուլիսի 23-ից ի վեր, «տիրում է կատարյալ լուրջություն՝ մահվան լուրջությունը»³⁹:

Հիրավի, համիդյան ժամանակշրջանում Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ են եղել թե՛ փուլային, ամհամաչափ զարգացումը և թե՛ բնակչության ոչնչացման զանազան եղանակների կիրառումը, որը չի վրիպել Քիյեառի խորաթափանց հայացքից⁴⁰: Մուլթանը, ինչպես փաստերով ցույց է տալիս Քիյեառը, զանգվածային կոտորածների միջանկյալ ժամանակահատվածներում դիմել է արևմտահայության ոչնչացման տարատեսակ գործելամիջոցների, ինչպիսիք են ամհատական սպանությունները, արհեստականորեն կազմակերպված սովը, բանտերում կիրառվող խոշտանգումները, բռնի կրոնափոխությունը և այլն: Ի վերջո, Աթոլ Համիդի քաղաքականության բուն նպատակը, անկախ դրա կենսագործման եղանակների զանազանությունը, Քիյեառի համոզմամբ հանգում էր հայ ժողովրդի «համատարած բնաջնջմանը»⁴¹:

Հայոց ցեղասպանությունը պայմանավորելով պետական քաղաքականությամբ, Քիյեառը կտրականապես մերժել է այն իբրև կրոնական հեմքի վրա խարսխվող իրադարձություն մեկնաբանող տեսակետը: Լուի Մարժերիի հետ մեկտեղ նա վճռականորեն հանդես է եկել այս անընդունելի մոտեցման կողմակից Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Գաբրիել Հանոտտի (1853-1944) դեմ և խիստ քննադատության ենթարկել նրա թրքամետ դիրքորոշումը: Հենվելով, դիցուք, 1896 թ. Օսմանյան բանկի գրավման միջադեպին հաջորդած՝ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածների ընթացքում մայրաքաղաքում մահմեդական բնակչության կողմից հայերին ապաստան հատկացնելու փաստերի վրա, Քիյեառն ապացուցել է, որ քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա հակամարտությունը և կրոնական զանազանության բողոքի վրա վերջիններիս դրսևորած մոլեռանդության հանգամանքը արևմտահայության բնաջնջման գործընթացում վճռորոշ դեր չեն ունեցել⁴²:

Բանավիճելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների պատկերը խեղաթյուրող հեղինակների հետ, Քիյեառը հիմնավորապես հերքել է սկզբունքային մշանակություն ունեցող մի շարք հարցերում նրանց առաջադրած թյուր տեսակետները՝ կապված, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի նվազեցման, հայկական կուսակցությունների գործունեությունն իբրև անգլիական և ռուսական «բանարկությունների» հետևանք մեկնաբանելու, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը ժխտելու հետ: Նա ճշգրտել է կայսրության տարածքում բնակվող հայերի թիվը, որն, ըստ նրա հաշվարկների, դեռևս 1870-ական թվականներին տատան-

³⁹ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 124.

⁴⁰ Տե՛ս օրինակ՝ P. Quillard, Diplomatie secrète du sultan p. 898; *Այսօր*՝ Pro Armenia II // "Pro Armenia", 25 novembre 1900; *Այսօր*՝ Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 10-36; Pour l'Arménie et la Macédoine, p. 251-255.

⁴¹ Տե՛ս 1903 թ. հոկտեմբերի 25-ին Փարիզի Սահա Բեռնար թատրոնում գումարված միստում նրա ունեցած ելույթը. Pour l'Arménie et la Macédoine, p. 256.

⁴² P. Quillard & L. Margery, Ազվ. աշխ., էջ 17-18:

վում էր երեք միլիոնի սահմանում, վկայակոչել հայ ազգային հերոսներ Աղբյուր Սերոբի և Անդրեանի կի գործունեությանն առնչվող հավաստի փաստեր⁴³:

Խստագույնս մշակակելով արևմտահայության ճակատագրի համդեպ եվրոպական պետությունների անկարելից վերաբերմունքը, Քիչետոն ամենևին չի զլացել պարբերաբար քննադատական խոսքեր ուղղել նրանց հասցեին, բազմիցս ընդգծել է եվրոպական պետությունների մեղսակցությունը հայկական կոտորածների սանձազերծմանը: Եվրոպային Քիչետոն անվանել է 1894-1896 թթ.՝ «մարդկության դեմ իրականացված» պատմության մեջ անմասնադեմ հանցափորձի» մեղսակից⁴⁴: Նրա համոզմամբ, «ամենագործության և անպատժելիության զաղափարը» սուլթանին ներշնչել է մեծ տերությունների «ամոթալի թողտվությունը»⁴⁵ (մշեմք, որ Քիչետոն անողոք է, մասնավորապես, Հանտոյի նկատմամբ, որը, նրա համոզմամբ, «իրեն պատվագրվել» էր⁴⁶ և դարձել «Մարդասպանին մվիրված» նրա հանցակիցը»⁴⁷):

Եվրոպական պետությունների անգործունեությունը Քիչետոն մասամբ մեկնաբանել է նրանց միջև առկա անհամաձայնությանը, որը ոչ միայն ճանապարհ է հափթել զանգվածային կոտորածների իրականացման համար, այլև հուսալքել է հայերին⁴⁸ և այն համոզմունքն է հայտնել, թե սուլթանն ի զորու էր արյամբ հեղեղել և հրկիզել Բալկաններից մինչև Արարատ, Սև ծովից մինչև Պարսից ծոցն ընկած տարածքները, իսկ սոսկ իրենց շահերով առաջնորդվող քաղաքակիրթ պետությունները, այդ ամենին ի տես, մնալու էին, այդուհանդերձ, անհողողող դիտորդի դերում⁴⁹:

Ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականության որպես զլխավոր պատճառ նա մշում է. «Կայսրության մասնատումից խուսափելու համար, *Ֆրանսիան ամոթահար է լինելու՝ զոհերի և դահիճների պայքարում՝ վերջիններիս աջակցելու պատճառով*» (ընդգծումը հեղինակինն է - Վ. Պ.)⁵⁰:

Արևմտահայության վիճակը բարելավելու նպատակով Քիչետոն պահանջել է Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը: Նշելով, որ «սուլթանին խոստումները գրեթե մույքան անհամար են, որքան նրա զոհերը», նա համոզմունք է հայտնել, որ Օսմանյան կայսրությունում հայերի համար նախատեսված բարենորոգումներն իրականացնելու միջոցով միայն հնարավոր է փակուղուց ելնելը: Ըստ նրա, այդ բարենորոգությունները հարկ էր սուլթանին «պարտադրել, այլ ոչ թե խոնարհաբար *ներկայացնել*»⁵¹ (ընդգծումը մերն է - Վ. Պ.): Ստեղծված անելանելի կացությունը շտկելու «միակ հնարավոր» ուղին, ըստ նրա, ոչ միայն հայկական վեց վիլայեթներում բարենորոգումների

⁴³ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 59-88.

⁴⁴ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 125.

⁴⁵ P. Quillard, Préface // Dorys, Abdul-Hamid intime, p. XI.

⁴⁶ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 janvier 1901.

⁴⁷ P. Quillard, Préface // Dorys, Abdul-Hamid intime, p. X.

⁴⁸ P. Quillard & L. Margery, մշվ. աշխ., էջ 11, 16, 19:

⁴⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 décembre 1900.

⁵⁰ P. Quillard & L. Margery, մշվ. աշխ., էջ 24:

⁵¹ Pour l'Arménie et la Macédoine, p. 257.

իրականացումն էր, այլև եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների հսկողությամբ անընդ կտմվող վարչակարգի հաստատումը⁵²:

Ուստի՝ օրինաչափ է, որ Քիյեառը հանդես է եկել իբրև Օսմանյան կայսրության ներքին գործերին եվրոպական պետությունների միջամտության ջերմ կողմնակից և փորձել իր դիրքորոշումը հիմնավորել՝ ելնելով XX դարասկզբին Եվրոպայում տիրող քաղաքական իրավիճակի առանձնահատկություններից: «Հարկադրելու համար սուլթանին վերջապես կենսագործել Բեռլինի պայմանագրի հողվածները»,- գրում է նա,- «ամենևին չի ծագի եվրոպական տերությունների միասնական համաձայնությունն ապահովելու անհրաժեշտությունը: Հայ ժողովրդին կատարյալ բնաջնջումից փրկելու համար բավական կլինի նրանցից մի քանիսի միջև դաշինքի կայացումը»⁵³:

XX դարասկզբին Քիյեառի, ինչպես նաև ֆրանսիացի շատ այլ մտավորականների մարտական ելույթներն առաջ են բերել, բնականաբար, Աբդուլ Համիդի երկյուղը: Վերջինս, օգտվելով Ֆրանսիայում գործող օրենքների ընձեռած հնարավորությունից, ցանկություն է դրսևորել դատական գործ հարուցել Հայ դատի ֆրանսիացի պաշտպանների դեմ: Այս առիթով «Անահիտ» խմբագրությունը Քիյեառին անվանել է նախատեսվող դատի «զլխավոր դերակատար», որը «Թուրքիո արդի կացությունը ամենեւ մանրամասն ու ամենեւ ներքին կերպով գիտցող ֆրանսիացիներն են»⁵⁴:

Աբդուլ Համիդը թեև փոքր-ինչ ուշացումով, այդուհանդերձ զիտակցել է, թե ինչպիսի հետևանքներով են իր համար հղի դատական քննության արդյունքները և հրաժարվել է իր պահանջից: Այս հանգամանքը Քիյեառին հիմք է տվել ծաղրելու սուլթանին, որը «զանգատվում էր մասնավորապես այն բանի համար, որ իրեն անվանում էին «մեծ մարդասպան, մեծ մսագործ, կարմիր սուլթան, կարմիր զազան»: Երբ նա իմացել է, որ փաստն ապացուցվելու է դատական միստում, հրաժարվել է իր բողոքից՝ խոստովանելով, այսպիսով, որ ինքն արժանի է բոլոր այդ տիտղոսներին»⁵⁵:

Հայ ժողովրդին սատարելու ասպարեզում Քիյեառի ցուցաբերած մեծ հետևողականությունը պայմանավորված էր զլխավորապես նրա քաղաքացիական բարձր դիմագծով, որին բնորոշ էին թե՛ ազնվությունն ու շիտակությունը և թե՛ հանուն արդարության մարտընչելու անսահմանարելի ցանկությունն ու ձգտումը: Նրա ժամանակակիցներից ոմանք (Ա. Ժերար, Ա. Ֆոնտենաս) իրավամբ ընդգծել են այն հանգամանքը, որ Կ. Պոլսում բնակվելու ժամանակաշրջանում նա խիզախել է վտանգի ենթարկել իր ազատությունը և նույնիսկ կյանքը հանուն հայ ժողովրդի ողբերգության հավաստի պատկերը եվրոպական հանրությանը ներկայացնելու գործի⁵⁶:

⁵² P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 97.

⁵³ Նույն տեղում, էջ 98:

⁵⁴ Սուլթանին դատը, «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 1-2, էջ 41:

⁵⁵ P. Quillard, Pro Armenia // "Pro Armenia", 25 novembre 1900. Այս առիթով, ի դեպ, «Անահիտ» խմբագրությունը սոսկ իր ցայն է հայտնել և հեզմանքով մշել. «Այդ դատը եթե տեղի ունենար, սուլթանին կամբովը կատարված միակ բարի գործը պիտի մնար, և ամբողջ խափանումը Ելիզգի Մարդասպանին ամենեւ ծանրակշիռ ոճիրներեն մեկը կրնանք համարիլ»: Տե՛ս Սուլթանին դատը, «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 3, էջ 79:

⁵⁶ Տե՛ս A la mémoire de Pierre Quillard, p. 44, 50.

Հետագայում, 1903 թ., Հայաստանում և Մակեդոնիայում ծավալված իրադարձությունների շուրջ՝ Վ. Բերարի և իր ցուցաբերած մեծ հետաքրքրությունը Քիլիկիայի մեկնաբանել է հետևյալ կերպ. «Մենք տեղում ծանոթացել ենք այս ժողովուրդների երկարատև մահատակությանը, հետաքրքրվել նրանցով և պատմելով այն մասին, ինչ տեսել ենք, կատարել ենք սոսկ մեր պարտքը, ասել ճշմարտությունը»⁵⁷:

Ըստ այս ամենի՝ Ֆ. դը Պրեսանսեն ունեցել է, անտարակույս, բոլոր իրավունքները հավաստելու, որ ի դեմս Քիլիկիայի «հայերը գտել էին անվեհեր մարտիկի, անխոնջ պաշտպանի, խելամիտ խորհրդակցանի»⁵⁸:

Հայ իրականության մեջ Քիլիկիայի հայամասսո գործունեությունը թեև հավուր պատշաճի չի արժեքավորվել, այնուամենայնիվ չի շրջանցվել լոռությամբ: Ֆրանսիական գրականության զարգացման ասպարեզում նրա վաստակի գնահատականը դեռևս 1895 թ. տվել է Ա. Չոպանյանը, որը դրա հետ մեկտեղ չի զլացել հայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնել նաև նրա որոշ ստեղծագործությունները⁵⁹: Քիլիկիայի անունը հնչել է մասնավորապես 1912 թ.՝ նրա վաղածամ մահվան կապակցությամբ, որի բոլոր ցնցել է Հայ դատի պաշտպաններին, մեծ վիշտ պատճառել հայ գործիչներին և մտավորականներին:

Ի շարք քաղաքական և հասարակական կազմակերպությունների (Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հնչակյան կուսակցություն, Թուրքիայի Հայոց պատրիարքարան, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարան), նրանցից շատերը (Անդրանիկ, Ս. Զավարյան, Ռ. Զարդարյան, Վարդգես, Գ. Զոհրապ, Սիամանթո և ուրիշներ) ցավակցական հեռագրեր են հղել Քիլիկիայի այրում⁶⁰, հանդես եկել նրան մկիրված հողվածներով⁶¹: Հայ Յեղափոխական Դաշնակցության պարբերականներ «Ազատամարտ» ու «Դրոշակը», որին, ի դեպ, Քիլիկիայի պարբերաբար թղթակցել է⁶², տպագրել են նրա մահախոսականները (անստորագիր)⁶³:

Գ. Զոհրապը, որին Քիլիկիայի մահվան գուժը, իր իսկ խոստովանությամբ, հարկադրել է ծնկի գալ, տվել է նրա գործունեության հետևյալ գնահատականը. «Ֆրանսայի մեջ է իր գերեզմանը. բայց իր անունը մերն է բոլորովին: Իր հրապարակագրի կյանքը մերն է, մեր ազգին Պատմության էն պայծառ էջերեն մեկ է. իր հիշատակը մերն է և բովանդակ Հայությունը պիտի հսկե անոր վրա»⁶⁴: Իսկ Սիամանթոն, չբավարարվելով Քիլիկիային մկիրված

⁵⁷ Pour l'Arménie et la Macédoine, p. 304.

⁵⁸ A la mémoire de Pierre Quillard, p. 193-194.

⁵⁹ Ա. Չոպանյան, Պիեռ Քիլիկի, «Ծաղիկ», 1895, թիվ 15, էջ 525-541: Այս հոդվածի մասին տե՛ս Կ. Լ. Դավլաթյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 79-80:

⁶⁰ Տե՛ս «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի – 31-ը հունվարի/13-ը փետրվարի 1912:

⁶¹ Նույն տեղում, 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Նրանցից ոմանց հողվածները ֆրանսերեն թարգմանությամբ զետեղվել են նաև Քիլիկիայի հիշատակին մկիրված՝ 1912 թ. Փարիզում լույս ընծայված ժողովածուի մեջ: Տե՛ս A la mémoire de Pierre Quillard, p. 215-236.

⁶² «Դրոշակ», 1906, թիվ 5, 9; 1907, թիվ 3, 5:

⁶³ «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի 1912; «Դրոշակ», 1912, թիվ 2, էջ 17-20:

⁶⁴ Գ. Զոհրապ, Հայկական սուգ, «Ազատամարտ», 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Տե՛ս նաև Գ. Զոհրապ, Նրկերի ժողովածու, չորս հատորով, Երևան, 2002, հ. Գ, էջ 468:

հողվածի լույս ընծայմամբ⁶⁵, մրա հիշատակին է ձոնել «Հոնտորը գերիներուն» բանաստեղծությունը⁶⁶:

Նշենք նաև, որ հայ մտավորականներից ոմանք հանդես են եկել Քիյետի արձանը կանգնեցնելուն, Սասունում Քիյետի անվան վարժարան հիմնադրելուն առնչվող առաջարկություններով և, համուն այդ մտահղացումների իրականացման, սկիզբ են դրել հանգանակությունների հավաքմանը⁶⁷: Այդ նախաձեռնությունները, սակայն, չնայած առաջին դրական արձագանքներին⁶⁸, հաջողությամբ չեն պսակվել: Կ. Պոլսում, Փարիզում, Բուդապեշտի զանազան քաղաքներում հանգրվանած հայկական համայնքները Քիյետի մահվան կապակցությամբ կազմակերպել են սգո հանդեսներ⁶⁹, իսկ թաղման արարողության ժամանակ Պեր Լաշեզ գերեզմանատանը մրա դագաղը կրել են Փարիզի հայ ուսանողները՝ մրան մատուցելով հարգանքի վերջին խորին տուրքը⁷⁰:

Քիյետի հիշատակին նվիրված ելույթում Ա. Ահարոնյանն, ի դեպ, ուշադրությունը կենտրոնացրել է Հայկական հարցում ֆրանսիական կառավարության պաշտոնական քաղաքականության և ֆրանսիացի մտավորականների գրաված դիրքորոշման ներհակության փաստի վրա. «Պաշտոնական Ֆրանսիան ևս մեզ թողել էր մեր թագակիր դահիճի ողորմածությամբ. այն ևս, առանց իր վեհ անցյալին վայել բողոքարկման, թույլատրել էր, որ մարդկության դեմ ուղղված մեծ հանցագործությունն իրականացվի: Սակայն, գոյություն ուներ մեկ այլ Ֆրանսիա՝ Վոլտերի, Լաֆայետի, Վիկտոր Հյուգոյի և Պաստորի Ֆրանսիան: Այդ վեհաշուք Ֆրանսիան կանգուն էր՝ իբրև հավերժական պահպանման այն ազնվաբարո ավանդների, որոնք միշտ եղել են և կլինեն այս երկրի վեհության ու անդիմադրելի հմայքի առհավատյալն»⁷¹:

Հենց այդ «վեհաշուք» Ֆրանսիայի արժանավոր զավակն էր, ըստ Ահարոնյանի բնորոշման՝ «մեծ հայասեր», «արդարության և ազատության մեծ ռաֆիկրա»⁷² Պիեռ Քիյետը, որը Հայ դատին սատարելու ասպարեզում ի հայտ բերած անձնավորությամբ և անշահախընդրությամբ դարձավ իր ժողովրդի հիմնավոր դեմոկրատական ավանդների անմար հուրի ջահակիրը:

⁶⁵ Սիամանթո, Քիյետո մտերիմ, Սիամանթո, Ամբողջական երկեր, Անթիլիաս, 1989, էջ 228-229:

⁶⁶ «Դրոշակ», 1912, թիվ 3: Տե՛ս նաև Սիամանթո, Տաղ Քիյետի հիշատակին, Սիամանթո, Անտիպ երկերի ժողովածու, Երևան, 2002, էջ 297:

⁶⁷ «Ազատամարտ», 29-ը հունվարի/11-ը փետրվարի, 17-ը փետրվարի/1-ը մարտի 1912:

⁶⁸ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁶⁹ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 4/17-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁷⁰ Նույն տեղում, 27-ը հունվարի/9-ը փետրվարի 1912:

⁷¹ A la mémoire de Pierre Quillard, p. 21-22. Նշենք, որ մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում արևմտահայության ճակատագրի նկատմամբ Ֆրանսիայի որդեգրած պաշտոնական դիրքորոշման և ֆրանսիացի մտավորականների հայամասն գործունեության միջև առկա զանազանություններն Ահարոնյանից ավելի վաղ ընդգծել է Զուպանյանը: Տե՛ս Ա. Զուպանյան, Դարավերջի Ֆրանսան, «Ամառիտ», Ա տարի, 1899, թիվ 5-6, էջ 155:

⁷² A la mémoire de Pierre Quillard, p. 16.